Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.07.2021թ. թիվ 2113097870 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<17>>09 2021թ. 7-13 14253 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Վաղինակ Վարդանովի ՄԴ/71383-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Աէրացիայի թաղամասի 2/1Ա շենքի 36 բնակարանի բնակիչ Վաղինակ Վարդանովը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113097870 որոշումը՝ հայտնելով իր անհամաձայնությունը կայացված որոշման դեմ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը վարչական ակտը բեկանելու հիմք չի կարող հանդիսանալ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ **կանգառն արգելվում է հետիոտնային անցումների** վրա և շարժման ուղղությամբ հետիոտային անցումից առաջ՝ 5 մ մոտ վայրում:

Վարույթի ընթացքում առկա տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դիմումատուին պատկանող <<FORD>> մակնիշի 36 XO 363 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը 07.07.2021թ-ին ժամը 12:00-ին Երևան քաղաքի Մհեր Մկրտչյան - Խորենացի փողոցների խաչմերուկի հատվածում՝ մասնավորապես իրավախախտումն արձանագրած վայրում **կանգնեցրել է անմիջապես հետիոտնային անցման** վրա, ինչի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով՝ համաձայն որի տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար նույն հոդվածով նախատեսված չէ արարքի նվազ նշանակություն ունենալու որևէ պայման (կանգառի տևողություն, ուղևոր նստեցնել կամ իջեցնելու նպատակով կանգառ կատարել, դիտավորություն, անզգուշություն և այլն):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Այսպիսով, Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին վերը նշված որոշումն օրինական է և իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 28.07.2021թ. թիվ 2113097870 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Վաղինակ Վարդանովին:

Է.Կարապետյան

Կատարող՝ Գ.Սարգսյան
Հեռ.060838402